

176

~~16~~
1182

~~1182~~ 748

174

152
4-61
191
4. 79
ԽՈՐԵՎ ՊԵՏք ԱՊՐԵԼ

ԲԱԴ ԴԱԿԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔԵ ԱՊՐԵԼ

ԲԱՂԴԱԿԻՈՐ ՀԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

የኅብት በየዚት ስት ተኋላ.

Ա մեն կողմից ամենարժանաւոր մարզիկ աշխատասեր, արդապասեր և խիստ ազնիւ մարդիկ են: Առքա արժանի են ընդհանուր յարգանքի: Այսպիսի մարդիկներին չէ կարելի չհաւատալ, չէ կարելի չսիրել, չէ կարելի չցանկանալ նոցա նման դառնալ: Առքա են պահպանում ամեն լաւ և բարի բան աշխարհում և եթէ նոքա ըլինէին, ապրել ևս չարժէր:

Ոչ ոք պարտաւոր չէ հարուստ, խելացի
կամ դիտնական լինել բայց ազնիւ մարդ լի-
նել պարտաւոր է իւրաքանչիւրը: Լաւ տնա-
յին կեանք ունենալու համար անշուշտ պէտք
է ունենալ բարի սիրտ, առողջ խելք, համ-
բերութիւն և արդարամտութիւն: Բարու-
թիւնը կերպով իմն անբաժան է, խելքի հետ,

176 62

U R S U S Q U A R U S U P U S U M U M Q U H G



1458 87

— առ կենսատկանի միաւորութիւնն է հոգեկառնի հետ։ Խելքի և բարութեան միութիւնը շատ բանի մէջ է երևում։ Մենք շատ անգամ տեսնում ենք, որ խելքը մարդուն բարի է դարձնում և բարութիւնը շատ անգամ փոխարինում է խելքին։

Բնաւորութիւնը կազմվում է զանազան, մինչև անգամ ամենամանը հանգամանքների աղղեցութենից։

Որ չէ անցնում, որ մարդս չսովորէ որևէ իշելաւ կամ վատ բան, բայց իր մէջ լաւ բնաւորութիւն մշակելն առանց աշխատութեան և ջանքերի ոչ ոք չէ կարող։ Շատ անգամ կրպատահին գժուարութիւններ և փորձութիւններ, որոնց գէմ կարևոր է անշուշտ մաքառել նոցա յաղթելու համար։ Բայց հոգով հզօր և ազնիւ մարդը պիտի չյուսահատէ, այլ հաստատապէս պիտի յուսայ յաջողութեան վրա։

Առաւել բարի և ազնիւ դառնալու նոյն իսկ ցանկութիւնն ոգեսրում է և հզօրացնում է

մեզ, և մենք լաւագոյն ենք գտանում ամեն անգամն երբ ազնիւ ջանք ենք անում ցանկալի նպատակին համելու։

ԸՆԺԱՆԻՔԻ, ԸՆԿԵՐՈՒԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԻՆԱԿԻ ԱԶԴԻԵՑՈՒԹԵԱՆ։

Ընտանիքն առաջին և ամենադլխաւոր դըպրոցն է, որտեղ կազմակերպվում է մարդու բնաւորութիւնը։ Ընտանիքի մէջ է ստանում մարդն իր առաջին բարոյական կրթութիւնը։ Վորա մէջից է քաղում իր ամբողջ կեանքի համար վարվելու կանոնները, ահա թէ ինչի մի լաւ մայրը արժէ հարիւրաւոր դպրոցական ուսուցիչներ։

Ամենազքատ բնակարանը, եթէ նորա կարգադրողը բարի, հոգատար, ուրախ և մաքրասէր կին է, կարող է դառնալ քաղցր և խաղաղբարեբաղդութեամբ լի անկիւն։ Սա թանկագին կդառնայ մարդու համար անցեալի յիշատակութիւններով, սրտի համար ապաստան կդառնայ կեանքի փոթորիկներից և աղմուկ-

ներից հանգիստ առնելու, խաղաղ օթևան
կլինի աշխատութենից յետոյ, մխիթարու-
թիւն կլինի անրազդութեան մէջ, և ուրա-
խութիւն ամեն ժամանակ: Այսպէսով խա-
ղաղ ընտանեկան շրջանը լաւագոյն դպրոց է
ոչ միայն երիտասարդ, այլ և հասուն հա-
սակում:

Կասկած չկայ, որ բանականութիւնը տրված
է նոյնպէս կանանց, ինչպէս տղամարդիկներին
նորա համար, որ նոքա օգուտ քաղեն նորա-
նից և գործադրեն նորան և ոչ թէ նորա հա-
մար, որ նա բժանայ անգործադրութենից:

Կնոջ խելքը և բնաւորութիւնը մշակված
պիտի լինին նոյնքան իր սեփական, որքան
և ուրիշների բազդաւորութեան համար: Այս
խկ տղամարդիկ ոչ առողջ դատողութիւն,
ոչ բարի բարք կունենան, եթէ կանայք հա-
կառակն ունին:

Ընտանեկան կեանքից նուազ ազդեցութիւն
չունին մարդու բնաւորութեան վրա ընկե-
րակցութիւնը և օրինակները: Ուստի պէտքէ

աշխատել բարեկամութիւն կապել բարի և
ազնիւ մարդիկների հետ, նոցանից միայն բա-
րի բան սովորելու համար:

Անառակ մարդիկների հետ ընկերակցու-
թիւնն ապականված ճաշակի և արատաւոր
ձգտմունքի նշան է: Այցա ընկերութիւն յա-
ճախիկն անկասկած բնաւորութեան խանգար-
ման կհացնէ: Ուստի բարեմիտ և բարեխիզգ
երիտասարդները միշտ լաւ և աղնիւ մարդիկ-
ների ընկերութիւն պիտի որոնեն և նոցա նը-
մանել պիտի աշխատեն:

Ընդհանրապէս նոյն խակ մեզանից աւելի խե-
լացի և աւելի փորձառու մարդիկների ընկե-
րութիւնը մեր վրա միշտ լաւ ազդեցութիւն
ունի: Այցա միջոցով մենք աւելի մօտ ենք
ծանօթանում կեանքի հետ: Մենք օգուտ
ենք քաղում նոցա փորձառութենից և հը-
րահանգվում ենք, ծանօթանալով ոչ միայն
ինչ որ նոցա կեանքի բազդաւորութիւն և ու-
րախութիւնն էր, այլ և նոցա կրած տան-
ջանքի հետ: Ահա թէ ինչի խելացի և եռան-

դուն մարդիկների հետ բարեկամութիւնն և
ընկերակցութիւնը չեն կարող մեծ ազգեցու-
թիւն չունենալ մեր բնաւորութեան վրա:
Այսպիսի բարեկամութիւնն ամրացնումէ մեզ
մեր բարի դիտաւորութիւնների մէջ և սո-
վորեցնումէ մեզ օգտաւէտ կեանք վարել թէ
մեզ և թէ ուրիշների համար:

Մարդու բնաւորութիւնն յայանվում է
կեանքի ամեն հանդամանքներում: Արհեստա-
ւոր դասի մէջ անդամ լաւ բնաւորութեան
տեր մարդը կարողէ լաւ ուղղութիւն տալ
իր ընկերակիցներին և բարոյապէս բարձրաց-
նել նոցաւ:

Այսպէս Ֆրանկինը, Լօնդոնում արհես-
տաւոր լինելով, իր արթուն և ազնիւ կեան-
քի օրինակով ամբողջ ընկերութեան բարքն
ուղղեց: Փոքր առ փոքր նորա ընկերները դա-
դարեցին տօն օրերը վատնելով և արբելով
անցուցանել ակսեցին դրամ ժողովել սե օ-
րի համար, մաքուր և չպատուտած հադուստ
ունենար կիրակի օրերն եկեղեցի գնալ լսւ

և օգտաւէտ զրգեր կարգալ իրանց զաւակ-
ների կրթութեան և իրանց ընտանիքի պետ-
քերն հոգալ մի խօսքով ակսեցին թէ գոր-
ծարանում և թէ տանը արթուն և ազնիւ
կեանք վարել:

Իւրաքանչիւր մարդու ամենօրեայ կեանքը
ուրիշների համար օգտաւէտ կամ վեսասակար
օրինակներ է ներկայացնում: Որինաւոր մար-
դու կեանքն առաքինութեան ամենալաւ դաս
է և արատների ամենախիստ յանդիմանու-
թիւն:

Գրկտօր Հուկէր իր ծանօթ բարեպաշտ
մի քահանայի կեանքը կենդանի քարողէ ա-
նուանում, որը կարողէ ամենարատաւոր մար-
դիկներին անդամ համոզել թէ առաքինու-
թիւնը գեղեցիկ է:

Բարի Հերբէրտ, իր հովուական պարտքե-
րը կատարել ակսելիս, ասաց. ամենից աւելի
ես ցանկանումեմ համոզված լինել որ ինքս
ազնիւ և լաւ կեանք եմ վարում: Ասուծու-
խօսին համաձայն, որովհետեւ քահանայի

աղդեր, ծոյլ մարդիկն երբէք ոչինչ լաւ բան
չեն արած և երբէք ոչինչ անելու չեն: ծոյլ
լերը միշտ անյաջողութիւններին հանդիւ-
պում և միշտ պիտի հանգիպեն: նոքա եր-
բէք առաջադէմ գործ չեն կատարած: ծոյլ
լերը վասակար, անօգուտ, միշտ գանդատող,
ձանձրացող և անբաղդ մարդիկ են: Նոքա ոչ
երբէք և ոչնչով գոհ չեն լինում: երբէք ա-
ռողջ չեն լինում ոչ մարմնով, ոչ հոգով:

Ճուլութիւնն ամեն չարիքի աղբիւր է, ա-
մեն արատների մայր է, եօթն մահացու մեղքե-
րից մին է: Ո՛րքան մարդիկ գող և աւազակ
են դարձել միայն նորանից, որ ծուլանումէին
իրանց հայր աշխատութեամբ հայթայթելու:
Քրիստոնէութեան առաջին առաքեալները
ցոյց տուին մեզ աշխատութեան օրինակ: Պօ-
զոս առաքեալը պարձենումէր նորանով, որ
աշխատումէր իր ձեռներով և երբէք ոչ
ոքին ծանրութիւն չէ եղել: Բօնիֆացիոս
գնաց Անգլիա քրիստոնէական կրօնը քարոզե-
լու մի ձեռին աւետարան և միւս ձեռին հիւս-

8

բարեգործ կեանքը տմենալաւ միջոց է ժողո-
վրդի մէջ աւր և յարդանք յարուցանելու
դէպի քաջանան, նոյն իսկ նորան նմանելու
ցանկութիւն: Եւ ես սորան կհասնեմ: օգնու-
թեամբ Տեաւն, յարտիցեց նա, որովհետեւ այն
դարն, որի մէջ ապլումէնք, առաւելապէս
լաւ օրինակների մեծ պէտք և կարիք ունի
քան թէ խրատների:

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, ՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔ-
ՆԱԶՍՊՈՒՄՆ.

Աշխատիր իբրև թէ յաւիտեան պիտի ապրես,
Աղօթիր իբրև թէ այսօր ևեթ պիտի մեռնես:

Առանց աշխատութեան ոչինչ չէ կարելի
ձեռք բերել: Ինչ որ լաւ և վսեմ բան կայ
մարդու մէջ, աշխատութեամբ է սոսացվում:
Ու թէ աշխատութիւնը այլ պարապութիւնն
է կործանում մարդուն: Ճուլութիւնն այն-
պէս է մաշում սիրաը, ինչպէս որ ժանդը ու-
տումէ երկաթը: Ճուլութիւնը միակերպ ստո-
րացնումէ թէ անհատներին և թէ ամբողջ

նի գործիքներ ունենալով։ Անզիայից նա վերածը Գերմանիա գնաց, որտեղ ժողովրդին կառուցանելու արհեստ սովորեցրեց։

Անդադար և միևնոյն ժամանակ օդտաւէտ պարապմունքի սովորութիւնն անհրաժեշտ պայման է թէ տղամարդիկների և թէ կանանց համար և լաւագոյն միջոց է ձանձրոյթ չզգալու։ Այն մարդու համար, որը սովորած է բոլոր կեանքն օդտաւէտ պարապմունքով անցուցանել, իւրաքանչիւր րոպէն նշանակութիւն ունի, և երբ ազատ ժամանակ պատահի, նորանից օդուտ է քաղում վայելըութեամբ։

Յաջողութեան յոյսով աշխատել օդտաւէտ զբաղմունք դանել—ահա այս է բաղդաւոր լինելու լաւագոյն միջոցներից մին։

Մարդու քաջութիւնն այն ժամանակ է երեսում երբ լսելեայն ստիպումէ իրան համբերութեամբ տանելու ամենայն չարչարանքներ պարտքի և խղճմտանքի համար։ „Ես աւելի յօժարութեամբ կհամաձայնեմ վնասվելու, արդարութիւնն յայտնելով, ասումէր մի յայտ-

նի անզիացի, քանի թէ իմանամ որ արդարութիւնը կվնասվի իմ լոռութենից“։

Ջշմարիտ քաջութիւնը չէ արգելում մարդուն բարի լինել։ Ընդհակառակն, մենք յաճախ տեսնում ենք, որ բոլորովին քաջ մարդիկ շատ մեղմ և հեղ բնաւորութիւն ունին։ Որինակ Նէպիրը, որը Անզիայի պատերազմի միջոցին Խապանիայի դեմ քաջութեան հըլլաշքներ արեց, երբեք որսի չելք կնումն ուրովհետեւ անբան կենդանին իզուր սպանելու միտքն անգամ անտանելի էր նորա համար։ Յետոյ Լիւտիրը, կրօնի համար մահն յանձն առնելու, ամենասաստիկ չարչարանքներ կրելու պատրաստ մարդը, սիրումէր ւանուկներին, ծաղիկներ և երաժշտութիւն։ Նորա եռանդը և քաջութիւնը չէին արգելում նորան կնոջ պէս բարի, քնքոյշ սիրտ ունենալու։

Քաջ և արի տղամարդը վեհանձն է և ամեն դէպքում աղնուաբար է ներգործում։ Նա օդուտ չի քաղի մինչեւ անգամ իր թշնաւու

նեղ զրութենից, չի յարձակիլի այն մարտու վրա, որը պաշտպանվելու ոյժ չունի։ Վեհանձնութեան այսպիսի օրինակները պատահումեն պատերազմի միջոցին ես։ Որինակ, Դիեօտինդէնի մօտ եղած ճակատամարտում ֆրանսական հեծելագունդը յարձակվեցաւ անդլ' աշան զօրքի վրա։ Հեծելագնդի զլուխ կանգնած ֆրանսական երիտասարդ սպան կամենումէր ընկնել անդլիական զօռապետի վրա, բայց երբ նկատեց, որ նա միայն մի ձեռք ունէր, որով բռնած էր իր ձիու սանձը, ֆրանսացին քաղաքավարութեամբ յարգանք մատոյց նորան իր թրով և առաջ գնաց։

Ահա դարձեալ ֆրանսական բանւորի գերօրինակ արիութեան և անձնութիրութեան մի դէպք։ Այս դէպքը Փարլիզում պատահեց։ Շատ բարձր, բայց գեռ բոլորովին չվերջացած տան շուրջը փայտամածներ կային, որտեղ աշխատումէին բանւորներ։ Փայտամածները ամուր չեին և յանկարծ քանդվեցան և նո-

ցա վրա գտնվող բոլոր մարդիկ թափվեցան բարձրից գետին բացի երկուսից մի պատանի և մի միջին տարիքով մարդ։ Նոքա երկոքեան բռնած էին ներսի տախտակի դուրս ընկած փոքրիկ ծայրից, որն արդէն ծալվում էր կախ ընկածների ծանրութենից և մօտ էր կոտրվելուն։ Պետրոս, զոչեց աւելի հասակաւորն, բաց թող տախտակը, մի՛ բոներ, միտքդ բեր, որ ես հայր եմ, ընտանիք ունիմ։ Այս ծշմարիտ է, պատասխանեց Պետրոսը, և բաց թողեց տախտակը, ընկաւ սալայատակի վրա և մեռաւ, բայց վրկեց ընտանիքի հօրը։

Անկասկածելի է, որ մարդս կարող է իրան վարժեցնել երկիւղի զգացմունքին չենթարկելու, ինչպէս որ կարող է սովորել ուշադիր, աշխատասէր, բարի և ուրախ լինել։

Կանայք տղամարդիկներից պակաս արիութիւն և եռանդ չունին, թէպէտ նոյցա աւելի քիչ են պատահում այս յատկութիւնները ցոյց տալու դէպքեր։ Ոչ ոք կանանց պէս համբերութեամբ և արիութեամբ չէ տանում։

տրամութիւնը և հիւանդութիւնը։ Փորձով
ապացուցված է, որ նոքա ընդունակ են դի-
մանալու ամենածանր փորձութիւններին և
թշուառութիւններին բոլորովին նոյն արիու-
թեամբ, ինչպէս և տղամարդիկը, և մենք շատ
ենք աեսնում այնպիսի կանանց, որոնք
տանումեն ամենադժուար հիւանդութիւն-
ներ առանց որեկից, գանդատների և արտօնու-
թի։

Կանայքն առաւելապէս ցոյց են տալիս ի-
րանց արիութիւնը և անսահման հաւատար-
մութիւնը դէպի պարտքը գթութեան և բա-
րերարութեան զործերում։ Ամենքին յայտնի
է թէ ի՞նչ աներկիւղ համարձակութեամբ
գթութեան քոյրերը զինուորների վլրքեր են
կապում նոյն իսկ պատերազմի դաշտում թըշ-
նամիների գնդակների կարկուաների տակ։
Եատ անգամ նոքա վլրքեր են ստացել իրանց
մարդասիրական պարտքեր կատարելիս։ Ո՞վ
չէ լած Լօնդօնում տիկին կարպէնտէրի և
ու Սարա Մարտէնի՝բանտէրի այս եռան-

գոտ և անվաստակ այցելուների և վերանորո-
գիչների անունները։


Սարա Մարտէնը որբ էր մնացել մանկու-
թենից և կրթվում էր իր մեծ մօտ։
Նա շատ բարի էր և բարեպաշտ, և մի նպա-
տակ միայն ունէր՝ լստ կարելուն թշուառ-
ներին օգնել։ Ուեռ ևս օրիորդ լիները նա
յաճախ մտածում էր յանցաւորների, բան-
տարկվածների ախուր գրութեան մասին։
Այս անբաղդները, մեղքերին և անառակու-
թեան մատնված, ամենքից արհամարհված
և ձգված, նորա խորին ցաւակցութիւնն
էին շարժում։ և նա վերջը վճռեց բոլոր իր
կեանքը նոցա սովորեցնելուն և ուղղելուն
նուիրել։ Բանտն այցելելու թոյլտուութիւն
ձեռք բերելով նա սկսեց ամեն օր քանի
մի ժամ բանտարկվածների հետ անցուցա-
նել կարդում էր նոցա Աւետարանը, սովո-
րեցնում էր նոցա կարդալ և գրել իսկ կա-
նանց բացի սորանից սովորեցնում էր գործել,
կարել և ձեւել բանկտում պատրաստած իրե-

րի վահուռումից դոյացած դրամով նա գնում
էր նոր նիւթեր արհեստներ սովորեցնել շա-
րունակելու համար: Տղամարդիկներին նա սո-
վորեցնումէր յարգեայ գլխարկներ հիւսել այ-
րական և մանկական զինարկներ կարել մին-
չե անդամ կարկատել մի խօսքով աշխա-
տումէր նոցա մի բանով զբաղեցնել որ նո-
քա պարապ չմնային, իրանց մնքերին անձ-
նատուր չլինեին: Այսպէս նա բանտը մի տե-
սակ փեթակ դարձեց, որտեղ ամենքը մե-
զուների պէս աշխատումէին: Այր մոտած կա-
լանաւորներն երբեմն ընդդիմանումէին նորան:
Ասկայն իր անփոփոխ հեղութեամբ նա կա-
րողանումէր իրան յարգել տալ նոցա և ու-
լիշների հետ աշխատեցնել:

Յանցանքների մէջ յամառած ծեր մարդիկ,
Լոնդոնի ճարպիկ գողեր, ապականված տղա-
ներ, անառակ ծովալքաներ, վատարարոյ կա-
նայք, մի խօսքով այն բազմազոյն բազմու-
թիւնը, որը սովորաբար մեծ քաղաքի բան-
աերն է լցնում, ենթարկվումէր այս բարի

կնոջ բարեգործ ազգեցութեանը: Այրա հրա-
կողութեամբ բանտարկվածներից շատերն ի-
րանց կեանքում առաջին անդամէին առ-
նում գրիչը ձեռին կամ սովորում այբուբեն
արժանագին այբբենարանով: Ատրան ձեռք
բերեց նոցա վասահաւթիւնը հսկումէր նոցա,
աղօթումէր և լալիս էր նոցա հետ, համակ-
րելով նոցանից իւրաքանչիւրին: Աա զար-
թեցնումէր նոցա մէջ բարի դիտաւորութիւն-
ներ, քաջալերումէր յուսահատածներին, առ-
մենքին ուղղվելու ձանտպարհն էր ցոյց տա-
լիս և օգնումէր նոցա նոր ձանտպարհի վրա:
Բանտարկվածների բանտից դուրս գալուց յե-
տոյ ևս նա չէր դադարում նոցա մասին հո-
գալուց: Կոցա աշխատած դրամներից նա փոքր
դրամազլուխ կազմեց, որը գործ էր գնում առ-
գտավածներին գործ գանելու, այսպէս օգնե-
լով նոցա ազնուաթեար նոր կեանք սկսելու:

Քաջութեան ուրիշ ռեսանն ևս կայ, որը նոյն-
շափ անհրաժեշտ կարեոր է կեանքում, այն է
ինքնազապումն կամ սկզբական-անձին իշխելն:



Այն մարդը, որը չգիտէ իր ցանկութիւններին դիմադրել իր կիրքերի ստրուկ է դառնում: Բարոյապէս աղատ լինելու համար, անբան կենդանուց բարձր կանգնելու համար, մարդս ոյժ պիտի ունենայ իր ցանկութիւնների և հակմունքի դէմ պատերազմելու, եթէ նոքա կարող են վեսասել իրան կամ ուրիշներին, իսկ այսպիսի ոյժը ձեռք է բերվում միայն ինքնազապման անդադար վարժութեամբ: Այս ոյժի մէջ է ահա մարդու զիտաւոր գերազանցութիւնը կենդանուց:

Այսպէս օրինակ Հանրի Պարտին քարոզիչը, որ յայտնի է իր հեղութեամբ և համբերութեամբ, մանկութեան ժամանակ անհամբեր, զայրացիոտ և չար էր: Սակայն իր վատ հակմունքի դէմ շարունակ մաքառելով, նա կարողացաւ վերջապէս յաղթել նոցա և դառնալ այն, ինչ որ խիստ ցանկանումէր լինել այն է բարի և համբերող մարդ:

Պ Ա Ր Տ Ք.

Պարտքը լցնումէ մարդու ամբողջ կեանքը: Սա սկսվում է ընաանկիքի մէջ: Այլ և կին պարտք ունին միմեանց սիրելու և յարգելու, բաժանելով իրանց մէջ ուրախութիւններ, վշտեր և հոգսեր և օգնելով միմեանց ամեն բանի մէջ: Մանուկները պարտք ունին սիրելու, պատուելու և լսելու իրանց ծնողներին և մտածելու, որ ժամանակով իրանք պիտի դառնան նոցա մսիթարութիւն և նեցուկ իսկ ծնողներն իրանց կողմէց պարտք ունին անդադար հոգալու, որ զաւակներին զարգացնեն լսու, ազնիւ և բարգաւոր մարդիկ դառնալու, իրանց և ուրիշներին օգտական լինելու: Պորա համար կարեոր է մանուկների հակմունք դիտել և ամեն կերպով աշխատել նոցա արատներն արմատախիլ անել ամենափոքը մանկութենից: Իսկ գլխաւորապէս ծընողների պարտքն է ոնչացնել մանուկների մէջ հետեւեալ արատներն, որոնք միւս արատնե-

րից աւելի են արդելում մարդիկներին բաղդաւոր և օդառաւելու լինելու, նախ նախանձ։ Այսանձոտ մարդն երթիք և ոչինչ հանդամանքներում չէ կարող բաղդաւոր լինել միւնքն է, հարուստ է թէ աղքատ, խելացի է թէ յիմար, գեղեցիկ է թէ տղեղ, սրովհետեւ չկայ այնպիսի մորդ, որը չհանդիպէր իր կեանքի մէջ իրանից աւելի հարուստ, խելացի կամ գեղեցիկ մարդուն։

Իր զրութիւնն անդադար համեմատել այն մարդիկների զրութեան հետ, որոնք մեզանից աւելի բաղդաւոր կամ հարուստ են - սա հաստատ միջոց է երթիք և ոչնչից դահ չլինելու։ Բայց եթէ մենք յաճախագոյն համեմատենք մեր զրութիւնը մեզանից աւելի չունեոր և անբազդ մարդիկների զրութեան հետ, կաեւնենք, որ մեզ մնումէ միայն գոհանալ Աստուծուց և օգուտ քաղելն իմանալ նորանից, ինչ որ տուելէ Նա մեզ և ոչ թէ նախանձել նոցա, որոնց Աստուած աւելի է տուել։ Արժէ միայն մտածել որ լինումեն այնպիսի

սարսափելի հիւանդութիւններ և տկարութիւններ, որոնց միջոցում ոչինչ հարսառութիւն չէ կարող ուրախացնել պէտք է յիշել կոյրերին, համբերին, կաղերին, սապատողներին, որ հասկանանք թէ որքան բաղդաւորութիւն է քաջ առողջութիւն և լաւ տեսողութիւն ունենալ։ Նա, որը դադարումէ հաւանելուց իր սեփական տունը և պարտէղը այն պատճառով միայն, որ զրացին առաւել լաւ տուն և առաւել մեծ պարտէղ ունի - նա երթիք չէ կարող բաղդաւոր լինել։

Երկրորդ արան եսականութիւնն է։ Այն մարդը, որ սովորելէ մանկութենից մտածել միայն իր մասին, և թէ ինքն միայն լաւ լինէր, չէ հասկանում, որ իրան զրկումէ լաւագոյն վայելութենից կեանքի մէջ, այսինքն այն վայելութենից, որ ստանում է մարդս ուրիշներին հածելի լինելուց։

Եսասէր մարդուն ոչ ոք չէ սիրում և նորա բոլոր շրջապատողները նոյնպէս սկսում են ստկաւ հոգալ նորա մասին, ինչպէս նա ինքն

սակաւ է հողում ուրիշների մասին, մինչդեռ
բարի մարդուն, որն աշխատում է ըստ հնաւ-
րաւորութեան ամենքին հաճելի բան անելու,
իւրաքանչիւրը սիրում է և իւրաքանչիւրն իր
կողմից ուրախ է նորան մի ծառայութիւն ա-
նելու:

Երրորդ արատը ծուլութիւնն է: Զանձրոյ-
թը մեր կեանքի անտանելի տանջանքներից մին
է: Այս մի տեսակ հիւանդութիւնն է: Բայց ովլ
է ամենքից աւելի ձանձրանում: Ի հարկէ ծոյլ
մարդիկ: Ծուլութենից ծոյլ մարդու գլուխն
այնպիսի վատ և տիսուր մաքեր են գալիս, ո-
րոնք աշխատօղ մարդն երազում ևս չէ տես-
նում: Այս գեռ քիչ է. ծոյլ մարդը պարա-
պութենից շատ անդամ արբեցութեան և
ուրիշ արատներին է անձնատուր լինում: և սո-
րանից երբեմն կատարելապէս վնասվում է և
աղքատանում: մինչդեռ կարող էր վայելուչ և
անկարօտ կերպով ապրել եթէ միայն կամե-
նար իր ծուլութեան յաղթել և գործ սկը-
սել: Աշխատասէր մարդու դիտակցութիւնը թէ

նա ի զուր չէ ապրում աշխարհումն, իրան և
ուրիշներին օգուտ տալով շատ է նպաստում
նորա բաղդաւորութեանը:

Անկասկած հասակաւոր մարդն ևս կարող
է թողնել այս արատները՝ եթէ նա հաստատ
կվճռէ ուղղվել բայց մանուկի համար այս
անհամեմատ աւելի հեշտ է: Այս թէ ինչի
ձնողների սրբազն պարտքն է իրանց զաւակ-
ներին լսու, կանոնաւոր կրթութիւն տալ:

Բացի ընտանեկան պարտքերից մարդը դար-
ձեալ պարտքեր ունի հասարակութեան վե-
րաբերմասի: Իւրաքանչիւր թէ աղքատ և թէ
հարուստ մարդու պարտքն է աշխատել որքան
կարելի է հասարակութեան օգտաւէտ անդամ
լինելու: Իսկ ընկերներին օգուտ տալու մի-
ջոցները շատ են: Որինակ շահաւէտ արհեատ
սովորեցնել բարի խորհուրդ տալ հարկաւոր
միջոցում: անզրագէտին կարգալ և գրել սո-
վորեցնել և այն: Յայտնի Արն Պիեր կրօնա-
ւորը մարդկութեան յաւիտենական երախտա-
զիտութեան արժանացաւ նորանով որ առա-

Ճինն տուեց արհեստական դպրոցներ բանալու միտքն աղքատ մանուկների համար, որտեղ նոքա ոչ միայն կարդալ և գրել են սովորում; Հապա և զանազան աշխեսաներ, որոնց միջոցով, հաստին առնելուց յետոյ, հնար ունին ազնուաբար իրանց ապրուատը հայթայթելու:

Այս կերպով պարտքը լցնումէ բոլոր մեր կեանքը, կեանքի մէջ մուտ գործելու բոպէից սկսած մինչեւ մահը. պարտքը աւագների վերաբերմասից պարտքը կրտսերների վերաբերմասից պարտքը հաւասարների վերաբերմասից առհասարակ մարդու պարտքը դէպի մարդ և դէպի Աստուած: Աստուած մեր վրա պարտք է դրել օգուտ քաղելու այն ամենից ինչ որ նա մեզ տուելէ թէ մեր սեփական և թէ մեր ընկերների բաղդաւորութեան համար: Պարտաճանաչութիւնը մի ոյժ էր որը քաջ մարդուն ևս քաջալերումէ: Պարտաճանաչութիւնն ողու վեհութիւնն է մեծացնում: Ելք Պոմագեռի բարեկամներն սկսեցին

Համոզել նորան Հռոմից չգնալ փոթորկի միշտոցին, իր կեանքը վտանգին չենթարկելու համար, նա վեհանձնութիւմը պատասխանեց թէ. „Գնալը նորա պարտքն է, իսկ ապրելը նորա պարտք չէ“: Եւ նա կատարեց այն, ինչ որ իր պարտքն էր համարում; ուշք չգարձնելով վտանգին, փոթորիկն արհամարհելով:

Պարտքի այսպիսի վեհմ գաղափարն անդամացի յայտնի Վելինգտոն զօրավարի բնաւորոյթի զլիաւոր յատկութիւնն էր: Վատերը լոի ճակատամարտի մէջ նա իր զինուորներին ասաց. „Հաստատ կացէք, զինուորներ, յիշեցէք թէ ինչ կասեն մեր մասին Անգլիայում“: Զինուորները նորան պատասխանեցին. „Հանգիստ եղէք, տէր, մենք մեր պարտքը դիտենք“:

Անգլիացի Ալլսօն ծովապեաը նոյնպէս քաջ գիտէր իր պարտքը: Սորա ապացոյցը նորա խօսքերն են, որով նա գարձաւ նաւատորմիշին Տրափաղարի ճակատամարտից առաջ. „Անգլիան մեր իւրաքանչիւրից իր պարտք կատարելուն է սպասում“, նոյնպէս և նորա

վերջին խօսքերը մահից առաջ. „Ես իմ պարտքը կատարեցի և սորա համար գոհանում եմ Աստուծուց“: Այսպիսի խորին պարտաճանաչութիւնը թէ մասնաւոր մարդու և թէ ամբողջ ժողովրդի կողմից մեծ գործ է:

Այն աղքը, որի մէջ պարտաճանաչութիւնը մեծ է, ոչինչ ժամանակաւոր աղետների միջոցում չպիտի յուսահատի իր ապագայի մասին: Բայց վայ այն աղքին, որի մէջ պարտաճանաչութիւնն ոչնչացել է. նա մօտ է կորստին:

Բ Ա Ր Ք

Արդէն ասացինք, որ կեանքի մէջ յաջողութեան զիսաւոր պայմաններից մին հեղաբարյութիւնն է:

Մարդու բաղդաւորութիւնը կախումն ունի զիսաւորապէս իր համբերութենից, առկունութենից, բարութենից, ոգու հարթամադրութենից և ընկերների բաղդաւորութենից մասին ունեցած հոգատարութենից: Պղատօնի խօսքերը թէ ուրիշների բաղ-

զտուրութեան մասին աշխատելով՝ մեր սեփական բաղդաւորութիւնն ենք պատրաստում: բոլորովին ճշմարիտ են:

Կան այնպիսի բաղդաւոր բնաւորութիւններ, որոնք միշտ և ամեն բանում կարողանում են լաւ կողմ գտնել: Զկայ այնպիսի միշարիք, որից նոքա միսիթարական և հանգստացնող միաք դուրս չբերելին: Զկայ այնպիսի մի մուլժ ամպ, որի մէջից նոցա համար գոնէ մի թոյլ արեգակնային ճառագայթ չըփայլէր: Այսպիսի բաղդաւոր բնաւորոյթով օժաված մարդիկն արդարեւ արժանի են նըմանօղներ ունենալու: Նոցա հոգին լցված է կարծես արեգակի լոյսով և այս լոյսը սփրովումէ նոցա ամբողջ շրջապատի վրա: Եթէ նոցա ևս վիճակված է լինում խաչը կրել նոքա կրում են նորան անտրտունջ, առանց անձկութեան, առանց վատնելու իրանց ոյժերըն անօգուտ արտասուքներով և գանգատներով, արիաբար առաջ են գնում փշերի մէջով, հարեւանցի քաղելով իրանց ճանապարհին պատահած ծաղիիները:

Թիւպէտ ողու ուրախ առամադրութիւնը
մեծ մասամբ բնածին է լինում այնուամենայ-
նիւ կարելի է նորան ձեռք բերել և կրթել
մարդու մէջ, ինչպէս ամենայն սովորութիւն։
Կեանքը մէնք կարող ենք ամենալաւ կամ ա-
մենափառ կերպով գործադրեք։ Կեանքը միշտ
երկու կողմ ունի և մեզանից է կախված լու։
Թէ վատ կողմին նայել։ Չէ կարելի բայցին
սպասել անդործ նստած, հարկաւոր է նորա
ընդառաջ գնալ աշխատութեամբ նորան ձեռք
բերեք։ Ամենալայն բնոյթներ լինում են սո-
վորաբար ամենաբարի, սիրող հաւատացող,
հաստատուն յոյս և ակնկալութիւն տա-
ծօղ։

Ողու զուարթ և ուրախ արամադրութիւնն
ոչ միայն ուրախութիւնների հարուստ աղ-
բիւր է, այլև միևնոյն ժամանակ հզօր նեցուկ
է բնաւորոյթի համար։ Մի շատ բարեպաշտ
մատենագրից հարցըին թէ ինչպէս է յաղ-
թում նա փորձութիւններին, նա պա-
տասխանեց։ „Հոգու ուրախ արամադրու-

թեամբ“։ Ուրախ բարքը գերազանց և շատ
օգտաւետ յատկութիւն է ամենօրեայ կեանքի
համար։ Մի ոմն այսպիսի արամադրութիւնն,
„Հոգու պայծառ եղանակ“ անուանեց։ Արդա-
րեւ զուարթութիւնը հանգստութիւն է փո-
խարինում, զուարթութիւնը մի տեսակ մըշ-
տընչենական երգ է առանց բառերի։ Զուար-
թութիւնը մարդուն ոյժ և սիրու է տալիս,
պնչղեռ արտասուքներ և անձկութիւն վաս-
տակարեկ են անում և թուլացնում են նորան։

Սէր, յոյս և համբերութիւն—ահա զուար-
թութեան իսկական աղբիւրները։

Սէրը մարդուն զիջող և բարեմիտ կարծիք
է ներշնչում մերձաւորների մասին։ Սէրը կա-
րեկից է, բարի է և հաստատուն։ Սէրը միշտ
աշխատում է տեսնել մարդիկների և կեանքի
միայն լաւագոյն կողմը։ Նա հաստատում է
մարդուն բարի մնագրութիւնների մէջ և իր
շուրջ ուրախութիւն և բաղդաւորութիւն է
սփոռում։ Սէրը և բարութիւնը ոսկու քա-
շով չեն ձեռք բերվում, սակայն իբրև շնորհի

և ուրախութեան աղբիւր անդնահատելի
են:

Նոյն իսկ մեզանից է կախված նայել կեան-
քի պայծառ կամ մութ կողմին: Շատ գէպ-
քերում իւրաքանչիւրիս համար կեանքն այն
է, ինչ որ մենք ինքներս նորան կդարձ-
նենք:

Չուարթ և ուրախ մարդիկն աշխարհիս իս-
կական աիրողներ են, որովհեամ աշխարհը նո-
ցա է պատկանում ով գիտէ նորան վայելել:

ԳՐ.ՔԵՐԻ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.

Մարդուն կարելի է ճանաչել իր կար-
գացած գլքերով և իր այցելած հասարա-
կութեամբ: Գլքերի հասարակութիւնը նոյն է
ինչ որ մարդիկներինը, և մենք պիտի աշխա-
տենք ապրել թէ մարդիկների և թէ գլքերի
ամենալաւ հասարակութեան մէջ:

Լաւ գլքերից մարդը կարողէ շատ օգտա-
ռէտ բան սովորել, շատ լաւ բան իմանալ:
Գլքերը բոլորովին առանձին հաճելի և միան-

գամայն օդառաւէտ աշխարհ են կազմում: Առ-
կայն վատ զլքերի ընթերցանութենից նոյն
եւանդով խուսափելու է, ինչպէս որ վատ
մարդիկների հասարակութենից:

Մի ոմն շատ ծշմարիտ է ասել թէ ամե-
նալաւ զլքեր նոքա են, որոնք առաւելապէս
նմանում են բարի գործերին: Գլքերը մաք-
րում են, բարձրացնում են և զօրացնում են
մարդուն: Նոքա ընդարձակութիւն և զարգաց-
նում են նորա խելքը, բնաւորութեանը հար-
թութիւն և գուարթութիւն են հաղորդում:
Լաւ զիւքը լաւագյն բարեկամի տեղ պէտքէ
համարել: Վա նոյն է և այսօր, ինչ որ երեկ
էր և երբէք դաւաճանելու չէ:

Գիրքը ամենահամբերող և տանող ընկեր
է և չի ուրանայ մեզ թշուառութեան միջո-
ցում: Գիրքը մեզ միշտ մի և նոյն քաղցր յօ-
ժարականութեամբ է հանդիպում: զուարձաց-
նում է և հրահանգում է երիտասարդութեան
մէջ, զբաղեցնում է և միսիթարում է ծերու-
թեան մէջ:

Գրքերն իրանց բոյներ են զնում՝ մեր պատի հողքում։ Գրքերի մէջ կարդում են այն, ինչ ու պատահէլ է, ուրիշ մարդիկներին, իսկ մեզ իշուում է թէ, այն մեզ չէտ է, պատահէլ։

Պէտքէ մի՛թէ խօսել այն ահային աղդեցութեան մասին, որ ունեցան գրքերը, ու Գըրաքից սկսած, մարդկութեան լուսաւորութեան վրա։ Գրքերի մէջ տեսնում ենք առաքինութեան, համբերութեան և անզադար աշխատութեան օրինակներ, և նոցանից շատ յաճախ քաջալերութիւն և մսիթարութիւն ենք ստանում։

Լաւ գրքերը, առաջինն ի հարկէ Աւետարանն է, միշտ բարեգործ աղդեցութիւն են ունեցել և ունին հազարաւոր մարդիկների վրա, նոցա սովորեցնելով համբերութիւն, աշխատութիւն և հնազանդութիւն Աստուծու կամքին։

Օրինակ Ռօրինղօն Կրուղօէ—բոլոր մանուկների այս սիրած զիրքը չէ, կարող լաւ աղդեցութիւն չունենալ մաքի և բնաւորութեան

վրա, որովհէեան մեզ սովորեցնումէ աշխատութիւն, համբերութիւն և զուարթութիւն։ Կարդալով թէ ինչպէս Ռօրինղօն Կրուղօէ այնքան տարի միայնակ աննապատ կղզու վրա էր ապրում։ Աստուծուն ազօթում և չէր կհատում, թէ ինչպէս էր թեթեացնում իր միայնակութեան անձկութիւնն անգագար աշխատութեամք, մենք սկսում ենք ամառել ձանձրանալուց և մեր վիճակի դէմ գանգատելուց, մեր ընկեր մարդիկների մէջ ապրելով։

Այնպիսի զրքեր ևս կան, որոնցից սովորում ենք թէ ինչպէս բարեփոխելու է մեր առնային կացութիւնը, երկրագործութիւնը, թէ ինչպէս պահպանելու է մեր առողջութիւնը, նոյնպէս և մեզ հածոյական և բարեկեաց կեանք վարելու հնազարութիւն տուող վրամը։

ԵՊՐԵԼՈՒ ԸՐՀԻՍՏ.

Ապրելու արհեստն արժանի է միւս գեղարչիւնների հետ միասին դասվելու. այս ար-

Հեստը բովանդակվում է սեփական միջոցներից ամենամեծ օգուտ քաղելու և կեանքից ամենաբարձր վայելչութիւններ քաղելու հեարագիտութեան մէջ, կատարեալ բաղդաւ որութեան հասնելու համար: Ասկաւ արհեստ չէ պէտք բաղդաւոր կեանք վարել իմանալու համար: Բաղդաւոր լինելը նշանակումէ այն մասնը վայելչութիւններ վայելել իմանալու որով լցված է մեր առօրեայ կեանքը:

Դրամը չէ զարդարում կեանքը այլ ընտիր ճաշակը, ճիշդը, լուսամիտ հայեացքը իրերի վրա և սիրող սիրաբը:

Այս յատկութիւններն ունենալով, մարդը ամենահամեստ վիճակի մէջ կարող է բաղդաւոր լինել: Աշխատութիւնը չէ արգելում ճաշակի և մոքի զարդացմանը, աշխատաւոր կեանքը մարդուն ազնուացնումէ:

Ընտիր ճաշակը ընտանեկան կեանքում մեզ համար վայելչութիւն է: Առաջին անգամ նոր ծանօթների դրան շեմքին ուր գնելուն պէս, իսկոյն կարելի է գուշակել ևթէ այն տանը

ճոշուկով մարդիկ են ապրում: Ամբողջ շրջապատող կարդ ու սալքի մէջ ընտիր կարդ է երևում մի տեսակ հանգիստ էք զգում այս մաքուր անկիւնի մէջ: Լուսամուի մէջ ծաղիկներու պատերի վրա նկարներ, գարակների մէջ գլքերու կարասիքը թէւ ճոխ չէ, բայց հանգիստ և յարմարաւոր:

Վարելու արհեստալ անային կեանքի ամեն կողմերին է վերաբերվում: Դուք ճաշի էք նստում այն տանտերի մօտ, որի բնակարանը վեր նկարագրեցինք, ձեզ կրերեն քիչ տեսակ, բայց սննդարաբ և համով պատրաստած կերակուր: Նպարը թարմ ճեղմակեղենը մաքուր, անօթներն արժանագին՝ բայց սիրուն, պարզ ջուրը մաքուր բաժակի մէջ այնպէս է փայլում: Որ յիշել անգամ չէք կամենայ թանկագին գինին: Ոչ հարուստ՝ բայց զարդացած մարդիկ իրանց համար բնակարան են ընտրում ամենառողջ տեղում, ուր օգն առաւել թարմ է և փողոցներն առաւել մաքուր, դրան առաջ միշտ աւելված է և աւագ ցանած:

ըրւսամուտների ապակիները մաքուր լուսցված, լուսամուտների տախատակների վրա վարդի պոյտեր։ Ալքան որ չունետը լինին սյս տնակի բնակիները, գուք հասկանումէք, որ նոքա գիտե՞ս, ապրել։ Սայենք այժմ հեռաւոր, ցեսիոտ փողոցին. այնաեղ կտեսնեք վլած տունը ըլուացված, պատառութած աղաներ խառումեն աղբի կոյտերի մէջ, անկարգ, չանաւրած կանայք նայումեն ձեզ դրան մէջ պարապ նստած. զգումէք, որ բոլոր շուրջը տղաքատութիւն է, մինչդեռ այս խրճիւմ և այն մաքուր տնակում բնակօղները շաբաթական մի և նոյն վարձ են ստանում։

Ի՞նչի մի և նոյն դաշտում աշխատող երկու երկրագործներից, կամ մի և նոյն գործարանում աշխատող բանուղներից, մին ուրախ և, թռչնիկի պէս երգումէ միշտ, մաքուր, վայելուչ հագուստ ունի։ Ամենայն կիրակի առաւտօնեան նա անշուշտ մաքուր հագուստ է հագնում և ընտանիքով գնումէ եկեղեցի։ Սա իր քսակի մէջ միշտ զրամ ունի, և

բացի տորանից մի փոքրիկ զումար ևս խնայողութեան գանձարանում ունի զրած։ Պարագեր նա չունի, կինը և զաւակները մաքուր հագուստ ունին, ինքն զըքեր է կարդում հոգե, տանում իր զաւակների կրթութեանը, մինչդեռ նորա ընկերը դեռ աւելի ոռջիկ ստանալով զալիս է աշխատելու արտում, տխուր, մէշտ վնթինթումէ, վաս հաղուստով և վաս կօշիկներով։ Տօն օրերին նա կէսօրից վաղ անից չէ դուրս զալիս այն ևս մի բաճկոնով, երեսը չլուացած, մազերը չսանարած, կարմրած, ուռած աչքերով։ Սորա մանուկները պատառութած հաղուստով, բորիկ վազգզում են փողոցի մէջ առանց հակողութեան։ Սորա զրպանը դաշտարկ է, բայի շաբաթ երեկոյից (Անգլիայում աշխատաւորները շաբաթ երեկոյեանն են ստանում շաբաթական վարձը), երբ նա պարագեր է վճարում։ Սա ասպրումէ առօրեայ վարձով տնտեսած չունի ոչինչ ոչինչ չէ կարդում ոչնչի մասին չէ մտածում միայն բանումէ, ուտումէ, խմումէ և քը-

նումէ: Մ՞եջից է գոյացել աղսպիսի զարմաւնալի տարբերութիւնն այս երկու մարդու մէջ: Նորանից է, որ մինի միտքը և ձաշակը զարգացած են, նա գիտէ աղբելու արհեստը, նա ոչ միայն ինքն է բաղդառոր, հապա իր բոլոր շուրջն եւս ատրածումէ հանգստութեան և բաւականութեան զգացում: Միւսն ընդհակառակն կոպիտ է, անատաշ միայն ձաշի և խմիչքի վրա է մատածում, ոչոքի և ոչնչի մասին հոգ չէ տանում և փարումէ անասունի կեանք: Մինչդեռ առաջինն ընդհանուր սեր և յարգանք է վայելում նորա օրինակը բարեգործ ազգեցութիւն ունի ընկերների և ծառնօթների վրա, երկրորդից ընդհակառակն ամենքը խորշումէն, մանուկները գողումէն հօր քայլերը լսելիս, կինն անհանդիսատ է, երբ աեսնումէ, որ նա արբած տուն է վերադառնում: Ու ոք նորան չէ խնայում երբ մեռնումէ, իր ընտանիքը առանց մի կտոր հայի թողնելով:

Աղբելու արհեստն, ինչպէս վերն ասացինք,

ամենից առաւել բնատանեկան կեանքի մէջ է երեւում: Իսկ ընտանեկան կեանքին բաղդաւոր ասելու համար, առաջին պայմաննը բարեկեցութիւնն է: Որտեղ ամենքը կոռուումէն, որտեղ թագաւորումէ կեղառառութիւն, անկարգութիւն, անմաքրութիւն, այնաեղ բարեկեցութիւնն աներեւակայելի է:

Այր մարդը, օրինակ շարունակ աշխատումէ ամբողջ օրը երեկոյեան առնը հանգստանալու ուրախալի յոյսով: Նորա բացակայութեամբ հոգատար կինը ամեն բան կմաքրէ, կլուանայ, կտեղաւորէ, ինքն կպատրաստէ իր տղամարդու սիրած կերակուրները, սեղան կըպատրաստէ, և այնպիսի մի քաղցրութիւն և հանգստանալութիւն կտայ համեստ տնային անկիւնին, որ հարկաւ ոչ մի կլուք և ոչ մի պանդոկ չեն հրապուրի նորան այնտեղից դուրս գտլու, և զուարձութեամբ կանցուցանէ այս և միւս բոլոր երեկոները իր ընտանիքի հետ:

Բարեկեցութիւն կամ յարմարութիւն բառով պէտքէ իմանալ ոչ միայն տաք ընակա-

բան, հանդիստ կարասիք և լու ճաշ, հապա
մի և նոյն ժամանակ մաքրութիւն, մաքուր օդ
և կարգ: Բարեկեցիկ կեանքի մէջ մարգը զար-
գանումէ թէ ֆիզիքապէս թէ բարոյապէս:
Բարեկեցութիւնը շատ առաքինութիւնների
չին է լինում:

Բարեկեցութիւնն անշուշտ հարստութիւն
է պահանջում: Չունեօրի համեստ անակը
անհրաժեշտ իրերն ունենալով և զիսին մաք-
րակենցաղ խոհական և խնայող տանտիկին
կանգնած, կարող է բարեկեցիկ կեանքի ամեն
պայմաններն ունենալ: Եթէ բարեկեցութիւն
չկայ, դա մեծ մասամբ ապացոյց է սեփական
առտնին տնտեսութիւնը վարել չիմանալու:

Տնտեսութեան մէջ խնայողութիւնն անհը-
րաժեշտ է: Խնայիր կոպէկը իսկ բուբիներն
ինքն իրան կհաւաքվին: Խնայող, տնտեսուհի
կինը գանձ է իւրաքանչիւր մարդու համար:

Ընդհանրապէս առանց կնոջ գործակցու-
թեան դժուար է առտնին կացութեան մէջ
առտեսութիւն, մաքրութիւն և կարգ պահ-

պանել: Եթէ կինը շուայլէ, դրամը նորա ձե-
ռից հոսումէ ինչպէս ջուրը մաղի մէջից: Իսկ
եթէ խնայողէ, իր տունը խտղաղ հանգիստ,
յարմար բոյն է դարձնում, և շատ անդամ
պատահումէ, որ խելացի, հոգառար կինը
իր ընտանիքի ապագայ հարստութեան և
բարօրութեան հիմք է գնում: Այլ մարդու,
մանուկների և անայինների բարեբազգութիւ-
նը կնոջ, մօր, տանտիկնոջ ձեռին է:

Որքան որ այրը խնայող լինի, եթէ տան
կառավարութիւնը տնտեսաբար չէ լինում, գը-
րամը տնտեսելու նորա հոգացողութիւնը նոյն-
պէս գուր կլինի, ինչպէս այն կնոջ հոգացո-
ղութիւնը, որի այրը արբեցող և վատնիչ
մարդ է:

Կեանքի մէջ անհրաժեշտ է դարձեալ ինք-
նագործունեութիւնը: Երբէք օտար օգնու-
թիւն, երբէք կողմնակի հոգ չեն կարող փո-
խարինել մարդու սեփական գործունեութիւ-
նը և հոգառարութիւնը իր մասին: Ա հարկէ
ուրիշի օգնութիւնը կարող է ժամանակաւո-

բապէս թեթեայնել մարդու գրութիւնը, բայց
միանգամայն ստորացնում է նորան իր աշ-
քում և սովորեցնում է նորան ամեն բանի
մէջ ուրիշների վրա յոյս դնել և ոչ իր
սեփական ոյժերի վրա: Ուստի մարդու հա-
մար արած մեր ամենահաստատ բարիքը և
ամենամեծ ծառայութիւնն այն է, որ սովո-
րեցնենք նորան ինքն իրան օգնելու, զարգաց-
նենք նորա մէջ ինքնագործունէութիւն և խը-
նայողութիւն, սովորեցնենք նորան իր մա-
սին հոգալ և օգնենք նորան անկախաբար առ-
րելու, իր հացն ինքնուրոյն աշխատութեամբ
վաստակելու: Այս շատ ճշմարիտ առած կայ.
«Օգնիր ինքդ քեզ, և Աստուած ևս քեզ կօգ-
նէ»: Ճշգութիւնն և կարգը անհրաժեշտ են
ամենայն տնտեսութեան մէջ: Ելր ամեն բան
իր ժամանակին է շինվում և իր տեղն է
դրված, այս հանդամանքը շատ աշխատու-
թիւն և ժամանակ է տնտեսում: Զուր չէ ա-
սում ամերիկական առածը թէ «ժամանակը
դիամէ»: Կորցրած ժամանակն երբէք դարձ-

նելու չես: Բարեկեցութիւնը շատ կախումն
ունի նոյն իսկ մարդիկներից: Եթէ տանուտէրն
և տանտիկնը խելացի, բարեմնյն, գործու-
նեայ, սրտաբաց անձներ են, նոքա կարողեն
ամենահամեստ կարգուսարքով ևս հիացնել:
«Լաւագոյն է գետնամնձորից կերակուրը և սո-
րա հետ սէրը, քան թէ գերայրած եղը և
նորա հետ ատելութիւնը»:

Խոհեմի բարի, խաղաղ լուսաւորված մար-
դիկ միշտ զիտեն իրանց տունը հաճելի և բա-
րեկեցիկ դարձնել: Նոքա քաղցրութեամբ են
ընդունում հիւրերին և միշտ բան կդտնեն
նոցա վայելուց կերպով մեծարելու:

Քաղաքավարութիւնը և լաւ վարմունքը
ամենեին այնպիսի գատարկ բան չեն, ինչպէս
որ շատերը կարծում են: Այքա շատ անդամ
թեթեացնում են մեզ համար կենցաղավարա-
կան գործերն և զուարձալի են դարձնում
մարդիկների փոխադարձ յարաբերութիւն-
ները:

Ճշմարտապէս քաղաքավար մարդը հեղա-

բարոյ է, միշտ պատրաստ է ուրիշին հաճելի
գործ անելու և աշխատաւմէ չփշացնել ոչ
քին: Մարդս պարտական է յարգել ուրիշի
անձնաւորութիւնն, եթէ կամ նումէ, որ իրան
ևս յարգեն և երբեք կատակով անդամ պի-
տի չասէ այն, ինչ որ կարող է վիրաւորել:
Միթէ դժուար է սովորել քաղաքավար և
քաղցր լինել: Պէտքէ միայն կոպիտ չպատաս-
խաներ եթէ ձեզ հարց կառաջարկեն, չհայ-
հոյել եթէ ձեր պարապմունքը կ'սանգարեն, զի-
ջողաբար տանել ուրիշների կոպիտ վարմունքը:

Մարդու բաղրաւորութիւնը կախումն ունի
գլխաւորապէս իր բարի բարքից, ուրախու-
թենից, բարեմջն վարմունքից և ուրիշներին
հաճելի բան աներու պատրաստ լինելուց: Բա-
րեմյն և քաղցր մարդը միշտ կկարողանայ
այնպէս կարգադրել որ նորա բոլոր շրջապա-
տողները հանդիստ և յարմարութիւն ունե-
նան: Այս տաքացնումէ իր ներկայութեամբ
և իր օգտին է տրամադրում բոլոր սրտերը:
Քաղաքավարութեան ամեն կողմից ֆրան-

սացիները կարող են մեզ լաւ օրինակ լինել:
Բացի նորանից, որ նոքա քաղաքավար են մ-
մեանց հետ, նոքա անձեռնմխելի են համա-
րում ուրիշի սեփականութիւնը: Ձիշդ գո-
ղափար ստանալու համար ֆրանսական ազդի
բնաւորոյթի մասին առհասարակ, հարկաւոր
է նայել զիւղերում երկրի ներսն ապրող ժո-
ղորդին: այն ժամանակ կհամոզ լինք թէ ինչ
աստիճանին յարգումէ այս ազդը ուրիշի սե-
փականութիւնը: Այնտեղ ոչ ոք չի թոյլառո-
րի իրան ուրիշի ծառից մի խնձոր կամ տանձ
քաղել թէև ծառը նոյն իսկ ճանապարհի
վրա լինէր, իսկ կարել կամ վնասել ծառը
անկարելի է նոցա մէջ: Ուրիշի սեփականու-
թեան այս յարգանքն է ահա, որ հնար է
տուել ֆրանսացի զիւղացիներին զիւղերի մէջ
եղած բոլոր մէծ ճանապարհներն երկու կող-
մից ևս խնձորենիներ և ուրիշ պաղատու ծա-
ռեր տնկել, որոնք անցորդներին ստուեր են
տալիս և միւնոյն ժամանակ մէծ օգուտ են
բերում իրանց տէրերին:

Սակայն բացի ուրիշի սեփականութեան յարգանքից, միւսնսիայում ամեն դաստիարգերի մանուկներին խառութեամբ սովորեցնում են յարդել անձնաւորութիւնը և նորա զգացմունքը: Կատ քիչ կպատահէք այնուեղ կոպիտ մարդուն: Ժաղավուրդը վերին աստիճանին քաղաքավայր է միմեանց հետ: Ուրիշի զգացմունքն յարգելը մեծ բարոյական յատկութիւն է, սա կարող է մեծ օգուտ տալ ժողովրդական զարգացմանը, եթէ պատուատվի ընտանեկան կրթութեան հետ: Այսականց ծնողներն եւ մանուկները միակերպ օգուտ կքաղին բարոյական կողմից:

Ճնային անմեղ խաղերը նոյնպէս շատ են նպաստում վարմունքի լաւ ձեւերի և յաջողակութեան մշակութեանը: Ոչ ապաքէն անկարելի է ամբողջ օրեր միայն աշխատել ուտել և քնել: Հարկաւոր է անշուշտ ազատ ժամանակի մի մասը զործադրել մտաւոր պարագմունքի և մարմնական վարժմունքի համար: Ջրօսանքը հարկաւոր է աշխատող մար-

գուն, մանաւանդ մանուկներին ուսումնարանների մէջ: Ցեմնելով օրինակ մի որևէ տան առաջ որ մանուկները կամ պատանիները գնդակի կամ թաքուստի խաղեն խաղումն մի՛ կարծէք թէ նոքա զուր են կորցնում ժամանակը. ընդհակառակն նոքա խնամումն իրանց կեանքը:

Արքան կարելի է շատ շարժողութիւն ունեցէք, որքան կարելի է յաճախ զրօննեցէք, եթէ կամենումէք շարունակ առողջութիւն վայելել: Եթէ կամակոր նստած էք աշխատելու և չէք շարժում այդպիսի կենցաղավարութիւնն անշուշտ կներգործէ ձեր առողջութեան վրա: Այն գիտնականներն, որոնք կարծում են թէ ժամանակ չունին ամենօրեայ զբօսանքի: Համար, վաղ թէ ուշ ժամանակ կունենան հիւանդութեան համար: Մեր վրա սուրբ պարտականութիւն կայ ոչ միայն չվկատելու և իրերի վրա տրտում չնայելու, այլ և ուրիշներին այս կողմից օրինակ տալու: Յանցանքները մեծ մասամբ դորժումն այն

մարդիկն) որոնք կեանքի մէջ չեն ունեցել զուարձութիւններ, չեն ենթարկվել բնութեան բարեգործ աղբեցութեանը և հեռացելեն հասարակութենից:

Հանգիստ առնելու և զբօննելու ցանկութիւնը մարդու բնական կարիքն է, որը խեղդվել անկարելի է. մի անմեղ զուարձութիւնն անհամեմատ աւելի բարեգործ աղբեցութիւն ունի մարդու վրա, քան թէ քանի մի տասնեակ բարեպաշտ քարոզներ:

Խմբչքների չափաւորութիւն տարածողները ուշ չեն դարձրել այն հանգամանքին, որ ժողովրդի հակումն դէպի արեեցութիւնը նորա կողիտ ճաշակների՝ և միտքն ու սիրտ զարգացնող անմեղ զուարձութիւնների պակասութեան հետևանքն է: Աշխատաւոր ժողովուրդը մեր մէջ դեռ ևս կոպտութեան մէջ է գտնվում: Կա իր համար ամենամեծ զուարձութիւն է համարում իր անասնական կարիքներին բաւարարութիւն տալը, և հանգասութեան ժամերին խմում է մինչև անզգայա-

նալը: Գերմանացիներն հին ժամանակ առաջնակարգ արքեցողներ էին համարվում: Այժմ նոքա ամենաչափաւոր ազգ են: Անդիսայում առած կար «արբած է իբրև գերմանացի ռամիկը»: Հապա ի՞նչով բժշկվեցան գերմանացիներն այս արատից: — Կրթութեամբ և երաժշտութեամբ:

Այո, երաժշտութիւնը շատ բարերար աղդեցութիւն ունի հասարակական բարքի վրա: Երաժշտութիւնը վայելչութիւնների աղբեւը է առտնին կեանքի մէջ և առանձին մի հրապուրանք է հաղորդում հասարակական ժողովներին: Հ. Պատէօ, հոգալով իրանդական ժողովրդի մէջ չափաւորութիւն տարածելու, զուր չէր աշխատում այնտեղ խմբական երգեցողութեան կուրքներ հաստատելու: Կա հասկացաւ, որ ժողովրդի ձեռից օղին խելվիս, հարկաւոր է գորա փոխանակ նորան որևէիցէ առողջ, հաձելի, զրգուղ զուարձութիւն տալ:

Երաժշտութեան ներմուծումն ժողովրդական դպրոցների ընդհանուր ուսման դասըն-

թաղի մէջ շատ գեղեցիկ ներդոքծութիւն
կունենար ժողովրդի վրա: Հապա ի՞նչի մե-
զանում մանուկները չեն երգում դասա-
րանում: Ինչպէս այս լինումէ Գերմանիա-
յում: Այն ժամանակ իւրաքանչիւր ընտանիքի
մէջ սեփական փոքրիկ երգեցիկ խումբ կլիներու
և աշխատութիւններից աղատ ժամերին հա-
սակաւորներն ևս կերգեին խմբովին, ինչպէս
օրինակ գերմանացի զինուորները բանակների
մէջ: Աշխատութիւնն ամենևին վեաս չէր կրի-
բանւորների երաժշտական վարժմունքից: Վեր-
ջապէս այն երիտասարդներն, որոնք յօժարա-
մառութիւն և ընդունակութիւն ունին դէպի
երաժշտութիւնը, կկարողանային նուագել սո-
վորել որելիցէ մի հասարակ նուագարանի վր-
րա և այնպէս իւրաքանչիւր գիւղում կդոյա-
նային քանի մի երաժշտագէտներ, որոնք տօն
օրերին և երեկոներին, աշխատութիւններ
վերջացնելուց յետոյ, կնուագեին մի տեղ մի
տան առաջ կամ մի ծառի տակ: Այս դէպ-
քում ի հարկէ ամենքը թէ մանուկները և թէ

հասակաւորներն ուրախութեամբ կհաւաքվի ~
ին նոցա շուրջ լսելու իսկ երբեմն զուցէ և
պարելու:

Մեծ օգուտ կարողէր տալ նոյնպէս պար-
տէզներ շինելը և պտղատու ծառեր տնկելը:
Իւրաքանչիւր գիւղացին կարողէր տնկել իր
տան շուրջ զոնէ քանի մի խնձորենի կամ
քանի մի թուփ մոշ ելակ և բալ: Սոքա մեծ
խնամատարութիւն չեն պահանջում և փոքր
տեղ են բռնում: մինչդեռ նոցա տեսքը շատ
հաճելի է աչքերին բացի նորանից, որ նոքա
կարող են եկամուտ տալ: Ցաւալի է, երբ մտա-
ծում ես, որ մեր գիւղերում մեծ մասամբ
մեր խեղճ գիւղացի երեխաները մեծանում են,
առանց երբէք տեսնելու քաղցր, հիւթալի,
հասած խնձորներ կամ ուրիշ պտղուղներ, բա-
ցի զուցէ անտառային հատապտուղներից և
կաղնից, որոնք ամեն անտառում ևս չեն պա-
տահանացին: Զարմանալու չէ, եթէ նոքա ամառը
զանազան անպիտան, երբեմն մինչև անդամ
վկասակար խոտեր են ուտում:

Սակայն ողբան դիւրին է տնկել քանի մի խնձորենի և թուփ տան առաջ պէտք է միւյն նոցա տնկել և ջրել սկզբում: Բայց սուրա հետ ծնօղները պէտք է սովորեցնեն իրանց զաւակներին, որ թողնեն իրանց յիմար սովորութիւնը ամեն բան ջարդելու և փշացնելու թէ իրանց սեփականը և թէ ուրիշնը: Պէտք է նոցա հասկացնել թէ հարկաւոր է խնձորենիներ խնամել և ջրել, եթէ կամենումենք նոցա պտուղներից վայելել, չկարել այն պըտուղները մինչև որ խակ են, այլ սպասելու է, որ նոքա հասնեն: Խսակ խնձորներից միայն փորին է ցաւում իսկ քաղցրութիւն և համ ամենեին չունին:

Խրաքանչիւր ցանկացօղն իր մօտ պաղատու ծառեր տնկելու կարող է գեղեցիկ ձեռնարկ գտնել նոցա պատուաստելու և խնամելու համար Ռէզօի ռուսերէն զրբի մէջ, որը 25 կօպէկ արժէ և ասվում է «Թումա Մաքսիմօվիչի զրոյցներ դիւրացի տղաների հետ պտղատու ծառեր տնկելու մասին» (Եօֆդի Թ.

Մաքսիմովիչ սъ крестьянскими мальчи-
ками о разведеніи плодовыхъ деревьевъ):
Առհասարակ ամեն ծառեր, նաև անպտուղ-
ները, մեծ օգուտ են տալիս, ուստի շատ
լաւ կլինէր ծառեր շատ տնկել: Բայց նորա-
նից, որ նոքա շինութեան համար գերաններ
և տախտակներ և վառելու համար փայտ են
տալիս, նոքա օդ են մաքրում և կլիմայ են
բարւոքում: Անտառային տեղ երեկ չէ լի-
նում այնպիսի երաշտութիւն, ինչպէս դաշ-
տային տեղ: Բայց այս ամենից, ամառվան
տաք ժամանակ ծառերը հով ստուեր են ձգում
որի տակ հասակաւորներն հաճութեամբ հան-
գիստ են առնում իսկ մանուկները խաղում են:

Դրաձեալ շատ օգտաւետ կլինէր, եթէ զիւ-
զացիները հրդեհներից ապահովութեան հա-
մար իրանց խրձիթները ծածկէին նօսր կա-
ռով պատաճ յարդով. այսպիսի տանիքները
դիւրութեամբ չեն այրվում և աւելի ամուր
են, անվաս մնալով տասն, երբեմն և տասն
և հինգ տարի:

Ա երեւն ասացի թէ մաքրութիւնը և կարդը
բարեկեցութեան զլխաւոր պայմաններն են:
Բայց աւելորդ չէր լինի, որ անհարուստ մար-
դիկ հոգային բրձան հնարաւոր է փոքր ինչ
գեղեցիութիւն ներմուծել իրանց տնային սարք
ու կարդի մէջ: Աստ դրամ պահանջող կա-
մայական իրերի մասին չէ խօսքս, բայց օրի-
նակ ծաղիկները,—ի հարկէ ոչ թէ թանկադին
օտարերկրեայ բոյսերը, այլ մի պոյտ վարդեր,
յափուկ (րէզէդա), անուշահոտ սիսեռ, մանու-
շակ, չնչին բան արժեն, բայց մեծ վայելչու-
թիւն են տափիս, մանաւանդ քաղաքի բնակիչ-
ներին: Ծաղկի պէս անմեղ և գեղեցիկ բան
չկայ: Ասրա բուրմամբ օդը սենեակի մէջ աւե-
լի մաքուր և թարմէ գառնում: Վարդի փա-
փուկ կոկոնները և նորա տերեւների թաւշային
կանաչը գրաւում են աչքերը: Մարդը զուար-
ծութեամբ է նայում ծաղկին, վաստակաբեկ
չոր աշխատութենից զլուխը բարձրացնելիս, և
առ ժամանակ կենդանանումէ: Վարդը պար-
տէղ կամ ծաղկանոց է յիշեցնում և մի քա-

նի բոսկէ երեակայութեամբ մարդս բնութեան
մէջ է ապրում:

Թէպէտ ծաղիկները թանկ չարժեն, այնու-
ամենայնիւ բարեգործ ազգեցութիւն ունին
մարդու կազմուածի, ճաշակի և մինչև անգոտմ
ոգու տրամադրութեան վրա: Ծաղիկը փայ-
փայող հեղ ընկեր է. նա միշտ ժպտումէ
ձեր առաջ, ուրեմն նորան մի՛ արհամարհէր
այն պատճառով միայն, որ նա արժանազին
է: Եթէ մաքուր օդը և արեգակի լոյսը մեզ
դրամով տալու լինէին, նոքա շռայլութիւն
կհամարվէին, բայց որովհետեւ ձրի են, ուստի
շատ անդամ նոցա ամենեին չենք գնահատում:

Ընդհանրապէս բնութիւնը, ինքն ըստին-
քեան, մեզ համար զբօսանքների և զուար-
ծութիւնների հարուստ պաշար է ներկայաց-
նում: Բայց մենք մի տեսակ անտարբերու-
թեամբ ենք նոցա վերաբերվում: Ահա մենք
ինչի պիտի սովորենք, թէ ինչպէս ձեռք բե-
րելու է վայելչութիւններ այն ամենից, ինչ որ
մեզ ըջապատումէ:

Անհարուստ մարդու համար ներկայումս
գժուար չէ տնային բարեկեցութեան հետեւ-
եալ պայմանները ձեռք բերելու մաքուր, թէև
փոքրիկ բնակարան, որտեղ ամեն բան մաքրու-
թեամբ և կարդով փայլէր, ոչինչ պարտք ոչ
ոքին, բաւական պաշար մառանում, քանի մի
լաւ զիջք սեղանի վրա և ծաղիկներ լուսա-
մուտների վրա:

Վերջապէս, բացի ծաղիկներից, այսպիսի
յարմար ամփոփ բնակարանի պատերը կարող
են զարդարված լինել գեղարջեստական իրե-
րով ևս: Ներկայ դարիս կատարելագործու-
թիւնների շնորհով շատ դիւրութեամբ կարե-
լի է գնել համեմատաբար չնչին գնով, ամե-
նահռչակաւոր պատկերների փորագրական, վի-
մագրական և լուսանկարչական օրինակներ:
Գիտութիւնը և հնարագիտութիւնը նկարչա-
կան գեղարջեստն ամենաշունեւոր մարդիկների
համար ևս մատչելի դարձրին:

Կրկնումեմ որ ամենեին հարկ չկայ պատ-
կերի համար թանկ զին վճարել, եթէ նա
ինքն ըստ ինքեան լաւ է:

Որեւիցէ հերսսական արարքի, սիրուն դաշտա-
վայրի, փողոցային տեսարանի մի նկար,—այս
բոլոր նպաստումէ ճաշակ զարգացնելուն, ինք-
նուսման միջոց է անհարուստ մարդիկների, մա-
նաւանդ մանուկների համար: Պատկերին նայե-
լով, մենք ակամայ փոխվում ենք առ ժամանակ
ամենօրեայ կեանքից գէպի գեղարջեստագէտին
ոգեւորող բանաստեղծական կեանքը: Շատ չա-
փաւոր գնով կարելի է գնել գեղեցիկ իւղաներկ
նկարի օրինակը, որ բոլորովին կփոխարինէ իս-
կական նկարը որովհետև հաճելի չէ մերկ պա-
տերին նայել նաև ամենահարուստ կահաւո-
րած սենեակների մէջ: Առանց պատկերների
համարեա սենեակը նոյն է թէ առանց լուսա-
մուտների: Հողին առ ժամանակ հանգիստ է
առնում առօրեայ հոգսերից, եթէ աշխատե-
լիս զլուխ բարձրացնելով, գեղեցիկ դաշտանկար
էք տեսնում առաջդ: Դիցուք թէ լուսամու-
տը նայում է նեղ բակին, կամ թէ հասել է
ձմեռը, երկիրը ձիւնով է ծածկված, երկինքը
թխպած է, իսկ պատկերի վրա նկարված է

կապոյտ ծով, որի վրա սահումեն սպիտակ
առագաստներով նաւակներ, կամ կանաչ պար-
տէզ, որի մէջ լի են վարդի և եսամանի ծաղ-
կած թփեր՝ գեղեցիկ ամառվան երկնքի տակ:
Ջեր մաքերը մի բողէ կթոչեն դէպի այն ծո-
վը, այն պարտէզը, կարծէք թէ զրօնումէք
պարտէզում կամ այն նաւակով, որ տառա-
նվումէ ալիքներով:

Մեծ մարդիկների պատկերներն ևս լաւ աղ-
դեցութիւն են անում մեր վրա: Առքա մեր
մէջ ցանկութիւն են յարուցանում աւելի
մօտ ծանօթանալու նոյն կեանքի հետ: Աս-
յելով նոյն ամբողջ օրելով մենք կարծես
ընտանանումենք նոյն հետ ոգով: Առցա աղ-
նիւ օրինակը շատ անգամ մեզ նեցնեկ և
հրահանգ է լինում մեր դործողութիւնների
մէջ:

Աերջապէս Փրկչի երկրաւոր կեանքից տե-
սարաններ ներկայացնող պատկերները կեն-
դանի յիշեցնումեն մեզ Աստուածային Վար-
դապետի մեզ աւանդած օրէնքը թէ «Աս-

տուածային, հրաշալի աշխարհը կտամ ձեզ
անարտում առւրի դոյութեամ աշխարհը, մի-
այն թէ կատարեցէք անաշխատ օրէնքը—սի-
րեցէք ընկերին իբրև ձեր անձին:» Աթէ ձեզ
համար գնած հասարակ պատկերը, քանի մի
տարուց յետոյ, կձանձրացնէ ձեզ գնեցէք մի
ուրիշ առաւել լաւը: Այդ լաւ նշան է, որ
ցաց է տալիս թէ ձեր մէջ զարգանումէ գե-
ղեցկութեան ձաշակը:

Այդ է ահա սեփական տանդ պատերը
պատկերներով զարգարելու օդուտը: Աթէ մի-
ջոյները ներումեն պատկերներին շրջանակներ
շինելու, լու՝ շինել տուեք: Խսկ եթէ ոչ—
դամեցէք նոյն պարզապէս պատի վրա:

Կարիչներն երեխ չափազանց ուրախ են,
որ նոյն նկարները լուսանկարչական և փորա-
գրական ձևով այժմ ընդհանրապէս մատ-
չելի շքեղութիւն են դարձեք: Լուսանկարիչ-
ները տալտակի, պղնձի վրա փորագրողները
լաւ միջնորդներ են զարձել դեղարհեստները
ժողովրդի մէջ տարտծելու: Հոչակաւոր նը-

կարիչների պատկերներն այժմ արդէն հարուսաների բացառիկ սեփականութիւնն չեն կազմում, վորագրութիւնը տեղափոխեց նոյն պատկերները վիմագրական ձևով ամենահամեստ գիւղացիների խրճիթների մէջ անդամ:

Ահա այն պատճառները թէ ինչի մենք ամենքս անշուշտ պիտի ուսումնասիրենք ապրելու արհեստը: Այս արհեստն իմանալով, նաև բոլորպին չունեոր մարդիկ կկարողանան կեանքից ուրախութիւն և վայելչութիւն ըստանալ: Սակայն ամեն բան նոյն ինքն մարդուց կախումն ունի. նա անդադար իր մէջ ողու ուրախ տրամադրութիւն պիտի պահպանէ, պիտի պատերազմէ կրքերի դէմ: զսպէ դիւրագրգութիւն, մի խօսքով պիտի կրթէ իրան, մշակէ իր բարի յասկութիւնները և հակմունքն, որոնք յածախ ննջումեն մեր մէջ, պիտի աւելի կարդայ լաւ գրքեր, պիտի ապրէ ազնիւ, բարեբարոյ մարդիկների շրջանում պիտի աշխատէ հասարակութեան յարդանքը

ձեռք բերել և բարի օրինակ լինի երիտասարդների համար:

Ուրեմն ապրելու արհեստը կարող է զանազան ձևերով երևել: Այս որոշվումէ սակաւ բառերով. պէտքէ իմանալ օգուտ քաղել մեզ շրջապատող ամեն բանից, առանց արհամարհելու նաև մանր բաներ: Եթէ մեր մէջ այս ընդունակութիւնը մշակենք, մենք մի առանձին հրձուանքով կնայենք մեր առանձին կեանքին և միեւնոյն վայելչութեամբ կզբունենք հարուստ դրացի անտառների մէջ այնպէս, իբրև թէ պատկանում լինէին մեզ: Յդը, արեգակը, դաշտավայրերի կանաչը, երկնքում անցուգարձ անող թափանցիկ ամպերը, ծաղիկները—այս ամենը մեզ համար ուրախութեան պատճառ պիտի լինի: Մենք պիտի սիւրենք երկիրն իբրև մեր ընդհանուր մօրը, պիտի համակրենք բնութեանը և նորա իւրաքանչիւր երեսյթին: Ամենաբովանդակ սէրը գէպի մարդկութիւնը մեր հոգու մէջ ամենավսեմ ձգտմունք է զարթեցնում և այն սէրի

ազդեցութեան տակ ոչ միայն մենք ինքներս
բաղգաւոր ենք լինում: Հապա ուրիշներին ևս
բաղգաւորութիւն ենք հաղորդում:



ԽԱՐԵՆ ԴԱՅՄ. ՎԵՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԻ
ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Հայկական Աշխարհ. Ամսագիր 1865 թուից մինչեւ 1871 թիւը եւ 1874 թ. մինչեւ 1878 թ..
 2. Արարատ Ամսագրի Խմբագրութիւնը 1879 եւ 1880 թ. Ա. Էջմիածնում:
 3. Մաճկավարժուոց, Մանկավարժական Ամսագիր 1884 թ մինչեւ 1886 թ. :
 4. Համակեդի ռեական Պրօգրամներ — Երագիրներ (առաջին փոքր) տշակեցական կանոններով եւ դաստիարակների հրահանգներով. Հայկ. Հոգ. Ծխական եւ Մէնակարգ. դպրոցների համար. 1883 թ. Գիմն է 50 հ.
 5. Մի հողով և ու. Մանկական թատրոն. Հատուած. 1885 թուին. Գիմն է 20 կոպ.
 6. Մակեն Խորենացու Հայոց պատմութեան աշխարհաբար թարգմանութիւն եւ լուսագանութիւն. 1889 թուին. Գիմն է 1 մաս. 50 կոպ.
 7. Դրիմի Ս. Խաչի Վաճառք, Վանքի Լուսանկարով. 1891 թ. Գիմն է 30 կ.
 8. Վեճարդ եւ գերարուզ. Մեծ մանկավարժ Պէստալոցցիի պատումի թարգմանութիւն. 1892 թ. Գիմն է 30 կ.
 9. Լ. Տօւսոյի Կրէյցլեան Սօնատ. Թարգմանութիւն. 1894 թ. Գիմն է 1 ֆրանկ—40 կոպ.
 10. Ինչպէս պէտքէ ապրել բաղդաւոր լինելու ճամար. (Ամպակ)
- 1894 թ. Գիմն է 20 կոպ.

ԶՅԱՎԵՐ

Ա Ճ Խ Ա Տ Ո Ւ Թ Ա Ւ Ե Ն Ե Բ .

11. Ընդհանուր՝ սկառմութիւն, չին դար, Ս. Աջմիածնի Գ.,
Ճեմարանում՝ դասախոսված։ Շուլդին/ց։
12. Ինդհանուր պատմութիւն, Միջին դար, նոյնակա Գ., Ճե-
մարանում՝ դասախոսված։
13. Առաջայի պատմութիւն ԽՀՕՎԱյակուց։
14. Տրամաբանութեան համառօսա ճեռարկ, Գ., Ճեմարանում
դասախոսված։
15. Մանկավարժական կաղամդիք, (Հրահանգիչ Կրթական յ-օ
դուածներ)։
16. Արարատեան աշխարհաբար լեռու հոլովմունք, Խոնարհ-
մունք եւ քանի մի ընդհանուր կանոններ։
17. Լեռոն Ա. Հայոց թագածոր, ովքերդ. նոր սրբա՛րված։
18. Մանկավարժական յիշառակարան, (Մի տարի եզրուկական
դպրոցների մէջ)։
19. Փաշտոռա թիշզամդի Հայոց պատմութիւն, աշխարհաբար
թարգմանութիւն։
20. Տարտիչը, Մօլիկը կատակերգ., Գրանսերէնից թարգմա-
նութիւն։
21. Մակրէտ, Շէկսպիրի եղերերդ. թարգմ.։
22. Բժմբասացութեան Հրահամդ, Գ., Ճեմարանում՝ դասա-
խոսված։

20 MAY 2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0559398

225